ԳԵՎՈՐԳ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 1912 Թ.

ՀՏԴ 93/94
DOI: 10.56246/18294480-2023.15-18

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող,
պատմական գիտությունների թեկնածու
էլփոստ՝ amirjanyan.hasmik@rambler.ru

Հայկական հարցի պատմությունը հայոց պատմության կարևորագույն փուլերից մեկն է: Հոդվածում ներկայացված է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի գործունեությունը, որը մեծ դեր է կատարել 1912թ. Հայկական հարցի վերաբացման հարցում:

Աշխատանքի մեթոդաբանական հետազոտության համար առաջնային հիմք են ծառայել ժամանակի գործիչների նամակները, հաշվետվությունները, որոնց պարունակած նյութերի համադրման, համեմատման և վերլուծության մեթոդաբանությամբ փորձ է արվել ևս մեկ անգամ վերհանել Հայկական հարցի վերաբացման դրդապատճառները, հարց, որն առ այսօր սպասում է իր լուծմանը:

Հայկական հարցի վերաբացման գլխավոր պատճառը արևմտահայության վիճակի վատթարացումն էր: 1909թ. ապրիլից սկսած՝ երիտթուրքերը կազմակերպում են հայերի զանգվածային ջարդ: Ներկայացվում է կաթողիկոսի դիրքորոշումն ու գործունեությունը վերաբացված հարցի կապակցությամբ, ինչպես նաև նրա համագործակցությունը այդ հարցում հայ, եվրոպացի և ռուս գործիչների հետ: Կաթողիկոսը դիմում է տարբեր պետական և հասարակական գործիչների՝ կանխելու արևմտահայության կոտորածը: Նա փորձում է եվրոպացի և ռուս գործիչների, հատկապես Կ.Պոլսի եվրոպական և ռուսական դեսպանների միջոցով ստիպել Թուրքիային՝ Արմտյան Հայաստանում իրագործել բարեկարգումներ: Կաթողիկոսը մեծ ջանքեր է գործադրում՝ ձեռք բերելու ռուսական կայսրի բարեհաճությունն այդ հարցում: Նա նամակագրություն է հաստատում Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի հետ: Հայկական հարցը միջազգային մակարդակով բարձրացնելու նպատակով նա հայտնի հայ գործիչ Պողոս Նուբարի ղեկավարությամբ պատվիրակություն է ուղարկում Փարիզ: Հայկական հարցը նորից դառնում է միջազգային հանրության քննարկման առարկա:

Բանալի բառեր՝ *Հայկական կոտորածներ, թուրքական կառավարություն, Արևմտյան Հայաստան, Ամենայն հայոց կաթողիկոս, պետական գործիչներ, Հայկական հարց, պատվիրակություն:*

1908թ. Օսմանյան Թուրքիայում հաստատված սահմանադրական կարգերը նոր հիասթափություն բերեցին արևմտահայությանը: Երիտթուրքերի կառավարությունն իր քայլերով ապացուցեց, որ որդեգրել է 1894-1896թթ. հայկական ջարդերի կազմակերպիչ սուլթան Աբդուլ Համիդի (1876-1909) հակահայկական քաղաքականությունը: Իսկ Եվրոպան ու Ռուսաստանը մոռացության էին մատնել Հայկական հարցը:

1912թ. բալկանյան ժողովուրդների՝ Բուլղարիայի, Սերբիայի, Չերնոգորիայի և Հունաստանի ազատագրական պայքարը (Բալկանյան առաջին պատերազմ, 1912թ. հոկտ. 8 (9) - 1913թ. մայիսի 30) Թուրքիայի դեմ նոր հույսեր արթնացրեց հայության մեջ: Նախադրյալներ էին ստեղծվել Հայկական հարցի վերարծարծման համար: Դա բխում էր նախևառաջ այն հանգամանքից, որ աճել էր մեծ տերությունների հետաքրքրությունը պատերազմի արդյունքների նկատմամբ:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն (1911-1930), որը համակ ուշադրությամբ հետևում էր իրադարձությունների ընթացքին, մշտապես տեղեկություններ էր ստանում արևմտահայության վիճակի վերաբերյալ: Կ.Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես Արշարունին (1911-1913) 1912թ. սեպտեմբերի 4-ին կաթողիկոսին ներկայացնում է հայերի նկատմամբ քրդերի ու չերքեզների կողմից իրականացվող բռնությունների, հալածանքների, սպանությունների, կանանց և անչափահասների առևանգման, բռնի իսլամացման մասին: Պատրիարքը խնդրում է կաթողիկոսին ձեռք բերել ռուսական կառավարության պաշտպանությունն ու հովանավորությունը[1]:

1912թ. աշնան ընթացքում կաթողիկոսին նմանօրինակ խնդրագրեր են հղում Երևանի բարեգործական-կրթական հաստատությունների ժողովը, Տարոնի հոգևոր առաջնորդ եպիսկոպոս Ներսես Խորախանյանը, 3000 վասպուրականցիներ, եգիպտահայ գաղթօջախի ներկայացուցիչները, Թիֆլիսում Ազգային ժողովի հրավիրման բյուրոյի նախագահն ու անդամները և այլն[2]:

Ինչպես տեսնում ենք, հայության շատ ներկայացուցիչներ երկրի փրկությունը կապում են Ռուսաստանի հետ: Իսկ հայ հասարակության լայն խավերն ու երևելի ներկայացուցիչները, քաղաքական շրջանակները՝ որպես համայն հայության համախմբող ուժ, խիստ բարձր էին գնահատում կաթողիկոսի դերը և գրություններով վերջինիս խնդրում դիմել ակտիվ գործունեության: Դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ Բալկանյան ճգնաժամի օրերին ավելի է ամրապնդվում արևմտահայության ռուսական կողմնորոշումը:

1912թ. աշնանից սկսած՝ Գևորգ Ե-ն բազմաթիվ նամակներ է հղում Կովկասի փոխարքա կոմս Ի. Վորոնցով-Դաշկովին (1905-1915)՝ փորձելով վերջինիս միջոցով դիմել ռուսական կայսրին՝ խնդրելով նրա միջամտությունը Հայկական հարցի լուծմանն ի նպաստ և շեշտելով, որ իրական երաշխիքը Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի հովանավորությամբ բարենորոգումներ իրականացնելն է: Այսպես, հոկտեմբերի 2-ին կաթողիկոսը հատուկ կոնդակով Պետերբուրգում գտնվող Ի. Վորոնցով-Դաշկովի մոտ է ուղարկում Էջմիածնի Սինոդի անդամ Մեսրոպ եպիսկոպոսին՝ ներկայացնելու Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից եկող ահագնացող լուրերը, որոնք անհանգստություն են առաջացրել նաև Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանում[3]:

Մեսրոպ եպիսկոպոսը փոխարքայի խորհրդով հոկտեմբերի 17-ին ներկայանում է նաև արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովին (1910-1916), իսկ հոկտեմբերի 25-ին՝ նախարարաների խորհրդի նախագահ Վլադիմիր Կոկովցևին (1911-1914): Վերջիններիս նա հաղորդում է կաթողիկոսի դիրքորոշումը. այն է՝ առաջիկայում որևէ «կոնֆերէնցիա»[4] լինելու դեպքում Ռուսաստանն այնտեղ

---

[1]. Ալեքսանյան Ս., Էվոյան Վ., Սարգսյան Ա., Մարդկությունը չպետք է ների, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, N 1 (10), փաստ. 108, էջ 85-86, Геноцид армян в Османской Империи, Сборник документов и материалов под. ред. М. Г. Нерсисяна, Ереван, 1982, էջ 228-229:

[2]. Ալեքսանյան Ս., Էվոյան Վ., Սարգսյան Ա., նշվ. հոդ., փաստ. N 1, էջ 37-42, Геноцид армян в Османской Империи, док. 110, с. 232-233, док. 112, с. 234-238, док. 115, с. 242-244. Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, Գէորգ Ե Սուրենեանց Կաթողիկոս Ամենայն հայոց (1847-1930), Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմող՝ Սանդրօ Բէհբուդեան, Երեւան, 2005, փաստ. 54, էջ 94-95, փաստ. 59, էջ 99, փաստ. 62, էջ 103:

[3]. Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, փաստ. 55, էջ 95-96, Հայոց պատմություն, հ. 3, գիրք երկրորդ, Երևան, 2015, էջ 134:

պաշտպանի հայ դատը[5]: Ռուս գործիչները հայտնում են, որ տեղի ունենալիք վեհաժողովում կողմնակից են հայերի դատի պաշտպանությանը և հայերի համար լավագույնն է, որ ռուսները միայնակ ստանձնեն այդ դատի պաշտպանությունը: Նմանօրինակ դիրքորոշումը բխում էր նախևառաջ Ռուսաստանի տիրապետության տակ ապրող արևելահայության շրջանում հուզմունքը դադարելու հրամայականից:

Կաթողիկոսը, սակայն, հասկանում էր, որ Հայկական հարցի լուծման ճանապարհին խիստ կարևորվում էր նաև եվրոպական պետությունների հետ բանակցելու անհրաժեշտությունը: Նա 1912թ. նոյեմբերի 8-ին Լոնդոնում Եվրոպայի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Յութուջյանին հանձնարարում է օգնության դիմումներ հղել եվրոպական մեծ տերություններին և ԱՄՆ-ին[6]: Իսկ նոյեմբերի 10-ի թիվ 1482 կոնդակով եգիպտահայ հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշային (1851-1930)՝ որպես ազդեցիկ և հեղինակավոր անձնավորության, նշանակում է Եվրոպայում՝ Փարիզում, կաթողիկոսի լիազոր և հայության ներկայացուցիչ և հանձնարարում է դիմել մեծ տերություններին՝ նպաստելու, որպեսզի արևմտահայությանը տրվեն մարդկային ամենատարրական իրավունքներ՝ կյանքի, գույքի և այլն[7]:

Իր հերթին արևմտահայերի Ազգային կենտրոնական վարչությունը նիստ է գումարում, կազմում «Ապահովության հանձնաժողով», որը որոշում է արևմտահայության դատի «...գործին պաշտօնական տէրը դարձնել Ամենայն Հայոց Կաթուղիկոսը, իբր հոգեւոր պետը համայն հայութեան»[8]:

Պատրիարքարանը նույնիմաստ հիշատակագիր է ներկայացնում Կ.Պոլսի ռուսական դեսպան Միխայիլ Գիրսին: Վերջինս 1912 թվականի նոյեմբերի 26-ի նամակում իր կառավարությանը տեղեկագրեր է ներկայացնում հայ գործիչների դիրքորոշման վերաբերյալ՝ խոստովանելով, որ կաթողիկոսի հարուցած հարցը «... Ռուսաստանի համար առաջնակարգ պետական նշանակություն ունեցող հարց է, որ պահանջում է բազմակողմանի մշակում»[9]:

Ռուսաստանի կառավարության արձագանքը հայերի խնդրանքին դրական էր, սակայն որոշվեց Հայկական հարցի խնդրով զբաղվել Բալկանյան պատերազմի ավարտից հետո: Ուստի Գիրսը և Սազոնովը, ամենայն հավանականությամբ համատեղ քննարկումներ ունենալով, խորհուրդ են տալիս հայերին Հայկական հարցը շեշտակի հրապարակ չհանել, հեղափոխական շարժումների չդիմել, քանի որ այդ օրերին դիվանագիտական մթնոլորտը ծանր էր, և դժվար կլիներ մեծ տերություններին համաձայնության բերել Հայկական հարցի ցանկալի լուծման շուրջ[10]: Այդպիսով, Ռուսաստանը պահը հարմար չգտնելով, դարձյալ առաջարկում էր, որ հայերն իրենց հավաքական դիմումներով չբարդացնեն Ռուսաստանի կողմից արևմտահայերի վիճակի բարելավման խնդրի իրագործումը: Ռուսական կողմի մոտեցմամբ «Եւրոպայի աչքին պէտք է, որ հայերը ներկայանան իբր զոհեր եւ ոչ որպէս յեղափոխականներ, որոնք կուզէին Թիւրքիոյ–ճգնաժամային այս օրերը շահագործել իրենց դատի համար...»[11]: Հետևաբար պետք էր սահմանափակել Փարիզի Ազգային պատվիրակության գործունեությունը, որպեսզի վերջինս Եվրոպայում նախահարձակ չլիներ: Փարիզում Ռուսաստանի դեսպան Ա. Իզվոլսկին (1910-1917) Պողոս Նուբարից պահանջում է ոչ մի քայլ չանել, մինչև Ռուսաստանի

---

[4].Նախատեսված էր Բալկանյան պատերազմի ավարտից ու խաղաղության դաշինք կնքելուց հետո գումարել մեծ տերությունների խորհրդաժողով:

[5]. Հայաստանի Ազգային արխիվ, ֆ 57, ց. 5, գ. 26, թթ. 5-6:

[6]. Նույն տեղում, գ. 19, թ. 22:

[7]. Պողոս Նուբար փաշա, Վավերագրեր, Երևան, 2021, վավ. 1, էջ 5-6:

[8]. Փափազեան Վ., Հայկական բարենորոգումները (1912-1914), Վեմ, Փարիզ, 1933, Ա, էջ 94:

[9]. Լէօ, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 306:

[10]. Հայոց պատմություն, հ. 3, գիրք երկրորդ, էջ 135-136:

[11]. Փափազեան Վ., Հայկական բարենորոգումները (1912-1914), Վեմ, Ա, էջ 94:

արտգործնախարարից պատասխան չստանան[12]: Ռուսական կողմի համոզվածությունը, որ հայերը կընդունեն իրենց առաջարկները, բխում էր առաջին հերթին նրանց վստահությունից. «...ներկայումս բոլոր հայերը, առանց կուսակցության խտրության, համակրում են Ռուսաստանին»,-գրում է Գիրսը Սազոնովին 1912 նոյեմբերի 16-ին[13]:

Փաստորեն, ի տարբերություն հայկական կողմի, որի համար տվյալ պահին հարցի վերաբացումը ձեռնտու էր և նպատակահարմար, ռուսական կողմի համար պահն աննպաստ էր, և վերջինս փաստացի ձգձգում է հայերի խնդրանքների դիմումները Եվրոպայում կայանալիք Լոնդոնի դեսպանաժողովին ներկայացնելու ձգտումը՝ արհեստականորեն խոչընդոտներ ստեղծելով դրա համար:

Գևորգ Ե-ն դեկտեմբերի 5-ին Փարիզում գտնվող Ազգային պատվիարկությանը խորհուրդ է տալիս հայերի կողմից պատգամավորական ժողով հրավիրել և Հայկական հարցին բարեհաջող ընթացք տալու նպատակով կազմել ընդհանուր ծրագիր Ռուսաստանի, Արևմտյան Հայաստանի, Եվրոպայի և Ամերիկայի հայերի համատեղ ուժերով: Այնուհետև 1457 թվակիր գաղտնի պաշտոնագրով Եգիպտոսի հայոց առաջնորդարանին հրահանգում է արևմտահայության ծանր վիճակը բարելավելու վերաբերյալ դիմումներ հղել եվրոպական տերությունների և «Ամերիկեան Հանրապետութեան վեհապետներուն եւ նախագահներուն, ինչպէս եւ այդ պետութեանց նախարարապետներուն եւ արտաքին գործոց նախարարներուն»[14]:

Մյուս կողմից կաթողիկոսը շարունակում է Հայկական հարցը ռուսական կողմի ուշադրության կենտրոնում պահել: Նա դեկտեմբերի 5-ին և 23-ին հերթական անգամ գրություններ է հղում Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին, իսկ դեկտեմբերի 24-ին՝ ռուսական կայսրին: Նամակներում կաթողիկոսը կրկին խնդրում է Լոնդոնում կայանալիք դեսպանաժողովում քննության առնել նաև հայկական վեց վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու հարցը[15]:

Այդ ընթացքում՝ դեկտեմբերի 22-ին, Վորոնցով-Դաշկովը կրկին Գևորգ Ե-ին գրում է, որ կայսերական կառավարության կարծիքով հայերի շահերից չի բխում Թուրքիայում հայկական հարցը տերությունների կողմից բալկանյան ճգնաժամի կարգավորման նպատակով հրավիրվող համաժողովի քննարկմանը ներկայացնելը[16]:

Հաջողության չհասնելով՝ կաթողիկոսը հերթական անգամ պատվիրակություն է ուղարկում Թիֆլիս՝ փոխարքայի մոտ, որը դեկտեմբերի 26-ին ներկայանում է Վորոնցով-Դաշկովին: Վերջինս, ծանոթանալով կաթողիկոսի գրությանը, շեշտադրում է, որ դրանում բացակայում է արևմտահայությանն օժանդակելու միջոցների մասին որևէ առաջարկ և նշում, որ կաթողիկոսն արևմտահայության հարցով չպետք է դիմի Լոնդոնի դեսպանաժողովին: Իսկ Ռուսաստանն այժմ չի կարող մուտք գործել Թուրքիա և գրավել, քանի որ պայմանները նպաստավոր չեն, ինչի մասին արդեն ասվել էր կաթողիկոսին[17]:

Փաստորեն կաթողիկոսը հերթական խնդրագրերը հղել էր մինչև փոխարքայի կողմից դեկտեմբերի 22-ի նամակի ստացումը:

Այսպիսով, ռուսական ճնշման արդյունքում կաթողիկոսի խնդիրն է դառնում հետևել, որ ազգային պատվիրակության և Կ.Պոլսի պատրիարքարանի կողմից Փարիզում և Կ.Պոլսի դեսպաններին ներկայացված ծրագրերը մասնավոր

---

[12]. Նույն տեղում, էջ 85:

[13]. Տե՛ս Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 152:

[14]. Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, փաստ. 67 էջ 108:

[15]. Геноцид армян в Османской Империи, док. 116, էջ 245: Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, փաստ. 68 էջ 109-110, փաստ. 71, էջ 113:

[16]. Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, փաստ. 70, էջ 112:

[17]. Նույն տեղում, փաստ. 72, էջ 114-118

նշանակության իմաստ ձեռք բերեն և չհամարվեն պաշտոնական գրություններ: Այս ամենի հետևանքով Հայկական հարցի լուծման ճանապարհին հակասություններ են առաջանում ազգային պատվիրակության, հայ հասարակական և այլ ներկայացուցիչների միջև մեծ տերություններին դիմելու հարցի շուրջ: Կաթողիկոսը մեծ ջանքներ է գործադրում՝ հաղթահարելու հայ ազգի տարբեր շերտերի միջև առաջ եկած անհամաձայնությունները:

Չնայած այս ամենին՝ Գևորգ Ե-ի 1912թ. գործունեությունը մեծապես նախապատրաստեց հետագա՝ 1913-1914թթ. Հայկական հարցի արծարծման և Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման ծրագրերի ընդունման ընթացքին, ինչի արդյունքում Հայկական հարցը ևս մեկ անգամ դարձավ միջազգային քննարկման առարկա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ալեքսանյան Ս., Էվոյան Վ., Սարգսյան Ա., Մարդկությունը չպետք է ների, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1 (10), Երևան, 1965, էջ 34-106:
2. Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Երևան,1976, 808 էջ:
3. Լէօ, հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, տպարան Ն. Աղանեանցի, 1915, 404 էջ:
4. Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 57, g. 5, գ. 19, թ. 22, գ. 19, թ. 22:
5. Հայոց պատմություն, հ. 3, գիրք երկրորդ, Երևան, «Զանգակ» հրատ., 2015, 760 էջ:
6. Պողոս Նուբար փաշա, վավերագրեր, կազմեց՝ Է. Հովսեփյան, Երևան, հեղինակային հրատարակություն, 2021, 407 էջ:
7. Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, Գէորգ Ե Սուրենեանց Կաթողիկոս Ամենայն հայոց (1847-1930), Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմող՝ Սանդրօ Բէհբուդեան, Երեւան, տպ. Մուղնի, 2005, 712 էջ:
8. Փափազեան Վ., Հայկական բարենորոգումները (1912-1914), Փարիզ, Վէմ, 1933, Ա, էջ 83-100:
9. Геноцид армян в Османской Империи. Сборник документов и материалов под. ред. М. Г. Нерсисяна, Ереван, Изд. Айастан, 1982, 704 с.

GEVORG SURENYANTS' ACTIVITY ON THE RESUMPTION OF THE ARMENIAN QUESTION IN 1912

AMIRJANYAN HASMIK

Doctor of Sciencies in History, Senior Researcher of the

Institute of History,

National Academy of Sciences of the Republic of Armenia

e-mail: amirjanyan.hasmik@rambler.ru

The history of the Armenian question is one of the most important stages of Armenian history. The article presents the activities of Catholicos of All Armenians Gevorg V, who played a significant role in revitalizing of the Armenian question in 1912.

The primary basis for the methodological study of the work relied on letters and reports from figures of that period. By employing methods of comparison, analysis, and juxtaposition of the materials contained in these documents, an attempt was made to once again identify the main motives of the Armenian Question, which remains relevant and unresolved.

The main reason for raising this issue was the worsening situation of the inhabitants of Western Armenia. The Young Turks, starting from April 1909 organized massacre of the Armenians. The article outlines the position and activities of the Catholicos regarding the newly emerged question, his collaboration with Armenian, European, and Russian figures. The Catholicos appealed to various state and public figures with a request to prevent the massacre of Western Armenians. He tried through European and Russian figures, as well as through Russian and European ambassadors in Constantinople, to force Turkey to carry out reforms in Western Armenia. The Catholicos made significant efforts to gain the favor of the Russian emperor. To achieve this, he corresponded with the governor of the Caucasus Vorontsov-Dashkov. To raise the Armenian question at the international level, he sent a delegation to Paris headed by a prominent Armenian figure Poghos Nubar.

As a result, the Armenian question once again became the focus of attention of the global community.

Keywords: *The Massacre of the Armenians, the Turkish government, The Western Armenia, Catholicos of All Armenians, statesmen, the Armenian question, delegation.*

ДЕЯТЕЛЬНОСТЬ ГЕВОРГА СУРЕНЯНЦА ПО ВОЗОБНОВЛЕНИЮ АРМЯНСКОГО ВОПРОСА В 1912 Г.

АМИРДЖАНЯН АСМИК
Кандидат исторических наук
Старший научний сотрудник
Института истории НАН РА
электронная почта: amirjanyan.hasmik@rambler.ru

История Армянского вопроса является одним из важнейших этапов армянской истории. В статье представлена деятельность Католикоса Всех Армян Геворга V, сыгравшего большую роль в возобновлении Армянского вопроса в 1912году.

Первоочередной методологической основой исследования работы послужили письма и доклады, рапорта деятелей этого периода, методом сопоставления, сравнения и анализа содержащихся в них материалов была предпринята попытка еще раз выявить основные мотивы Армянского вопроса, который по-прежнему актуален и не получил своего решения.

Основной причиной для открытия этого вопроса стало обострение положения жителей Западной Армении. Младотурки, начиная с апреля 1909 года, организовали массовые убийства армян. В статье выявлена позиция и деятельность Католикоса по вновь возникшему вопросу, его сотрудничество с армянскими, европейскими и российскими деятелями. Католикос обращался к

различным государственным и общественным деятелям с просьбой предотвратить резню западных армян. Он пытался через европейских и русских деятелей, а также через российских и европейских послов Константинополя заставить Турцию провести реформы в Западной Армении. Католикос приложил большие усилия, чтобы добиться благосклонности российского императора. С этой целью он установил переписку с наместником Кавказа Воронцовым-Дашковым. С целью поднятия Армянского вопроса на международном уровне он направил делегацию в Париж во главе с видным армянским деятелем Погосом Нубаром.

В результате Армянский вопрос вновь стал предметом внимания мирового сообщества.

Ключевые слова: *погром армян, турецкое правительство, Западная Армения, Католикос Всех Армян, государственные деятели, Армянский вопрос, делегация.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 21.04.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 28.04.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: